03.12.2024

# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Դեկտեմբերի 3-ին՝ միանալով միջազգային հանրությանը, նշում ենք Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրը, որի հռչակմամբ կարևորվում են հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրները, նրանց կյանքի որակի բարելավմանն ուղղված միջոցառումները, բարեփոխումներին միտված և լիակատար ինտեգրմանն ուղղված ծրագրերը:

Անկախ պայմաններից և առկա միջավայրից՝ յուրաքանչյուրս պետք է գիտակցենք, որ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները կարող են իրացվել միայն մեր վարքագծային փոփոխությունների և վերաբերմունքի արդյունքում:

Իհարկե, ոլորտային հիմնախնդիրները քիչ չեն՝ միջավայրի մատչելիությունից մինչև հավասար պայմանների ապահովում, բժշկասոցիալական միջոցառումներից մինչև զբաղվածության հասցեականություն, համարժեք վերաբերմունքի ձևավորումից՝ հասարակության իրազեկվածության բարձրացմանը ուղղված միջոցառումների իրականացում:

Կարևորելով հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի նշանակությունը և դրանց երկարաժամկետ ազդեցությունը՝ Սևան համայնքի, Ջինիշյան հիշատակի հիմնադրամի և Սևանի բժշկական կենտրոնի համագործակցությամբ արդյունավետ գործում են երեխաների և մեծահասակների վերականգնողական կենտրոնները, որոնք ծառայություններ են մատուցում հաշմանդամության և զարգացման հապաղումներ ունեցող երեխաներին և մեծահասակներին՝ առողջապահական գործունեությանը զուգակցելով հոգեբանական աշխատանքը, միաժամանակ ապահովելով վերականգնողական գործընթացի շարունակականությունը:

Ես ցանկանում եմ, որպեսզի մեր կողքին ապրող սահմանափակ կարողությունների տեր անձինք հնարավորություն ունենան լիարժեք իրացնել իրենց քաղաքացիական, սոցիալական, մշակութային իրավունքները, իսկ մենք էլ, յուրքանաչյուրս մեր հնարավորությունների չափով, պատրաստակամ լինենք, աջակցելու և նպաստելու նրանց իրավունքների իրացմանը՝ դառնալով զգայուն և արձագանքող հասարակություն, որի շնորհիվ կձևավորվի համերաշխ և ներառական միջավայր:

Յուրաքանչյուր անձ այս հասարակության լիարժեք անդամն է, հաշմանդամության խնդիրներ ունեցող անձինք էլ հավասար են բոլոր հավասարների մեջ, որոնք իրենց ներկայությամբ, աշխատանքով նպաստել և այսուհետ էլ նպաաստելու են մեր երկրի և մեր համայնքի զարգացմանը:

Սիրելի հայրենակիցներ,

Տեղական իշխանությունը՝ ի դեմս համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու, համայնքապետարանի աշխատակազմի, բնակավայրերի վարչական ղեկավարների, լինելու են ձեր կողքին, պատրաստակամ՝ աջակցելու և նպաստելու ձեր խնդիրների լուծմանը:

Մաղթում եմ ձեզ արևշատություն, առողջություն, արժանապատիվ կյանք, հասարակական ու համայնքային կյանքին մասնակցելու ձեր իրավունքների լիարժեք իրացում: